

ՌՈՒՍԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ԲՆԱԿԱԶՈՒԹՅԱՆ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ

(XVIII դարի վերջին քառորդ)

Պ. Ա. ՉՈՐԱՆՅԱՆ

XVIII դարի վերջին քառորդը հայ ժողովրդի պատմական զարգացման կարևորագույն փուլերից էր: Այդ ժամանակահատվածում հայ հասարակական ու եկեղեցական գործիչների մոտ, ի տարբերություն ազատագրական շարժման նախորդ փուլերի, արտաքին քաղաքականության ու Հայաստանի ազատագրության խնդրի լուծման հարցում ձևավորվում է համեմատաբար հստակ ու միասնական կողմնորոշում: Ժամանակի հայ դիմանադիտության մեջ հայ-ռուսական հարաբերությունները դառնում են գերակշիռ և համոզված ուղղություն: Այդ գործում նշանակալի դեր ունեն հինչպես Ռուսաստանի վարած արտաքին քաղաքականությունը, այնպես էլ ձևավորվող ռուսահայ գաղթօջախը:

Հայ-ռուսական փոխհարաբերությունների իրական պատկերի վերհանման համար կարևոր է հստակ պատկերացում ունենալ հինչպես ռուսահայ գաղթօջախի բացարձակ թվաքանակի, այնպես էլ նրա աճի ու փոփոխությունների միտումների, մյուս գաղթօջախների շարքում նրա զբաղեցրած տեղի ու դերի մասին: Նման ուսումնասիրության կատարումը համեմատաբար դյուրին է շնորհիվ ռուսահայոց առանձին գաղթավայրերի մասին եղած թվական տվյալների, առկայության ու Հովսեփ Արղվիշյանի կողմից տարբեր աղբյուրներից իր խնամքով կազմած ցուցակների, որտեղ ներկայացված են գրեթե բոլոր հայաբնակ վայրերը: Նույնը չի կարելի ասել այլ գաղթօջախների մասին՝ նմանատիպ տեղեկությունների համեմատական պակասի կամ չգոյություն պատճառով: Կարևոր է պարզաբանել նաև ռուսահայ գաղթօջախի համալրման ուղիներն ու ընդգրկած աշխարհագրությունը ողջ ժամանակահատվածի համար:

Ռուսահայ գաղթօջախի վաղագույն կենտրոն Աստրախանը, որով փաստորեն ներկայանում էր նշված գաղթօջախը XVIII դարի առաջին կեսին, նույն դարի վերջին քառորդին ևս մնում էր որպես հայ բնակչության հիմնական համաքաղաքներից մեկը, որը նաև կապող օղակ էր հանդիսանում մեկ կողմից Ռուսաստանի և մյուս կողմից Այսրկովկասի ու Պարսկաստանի միջև¹: 1763 թ. նկատերինս II-ի հրովարտակներից մեկում, որով հիմնավորվում էր հայերին եկեղեցական շինությունների կատարման արտոնումը, նշվում էր, որ 1706 թ. Աստրախանում կար 30 տուն հայ²: Նույն վավերագրում 1763 թ. համար հայերի քանակը Աստրախանում նշված է մինչև 500 տուն³: Ըստ Ն. Բ. Գոլիկովայի հաշվարկի, XVIII դարի առաջին քառորդի վերջին (1724—1725 թթ.) Աստրախանի հայ համայնքը հաշվում էր 399 մշտական և 104 ժամանակավոր, այն է՝ ընդամենը 500 արական սեռի բնակիչ, որից 115-ը՝ տների սեփականատերեր⁴: Հայ համայնքի մեջ ընդգրկված էին նաև 29 հույն և վրացի բնակիչ⁵:

1 Ղզարի և Մոզդուկի հայկական գաղթավայրերի մասին տե՛ս Լևոն Պողոսյան, Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի հիմնադրման մասին, — ԶԳԱ «Լրարեր հաս. գիտ.», Երևան, 1985, № 6, էջ 57—66:

2 «Полное собрание законов Российской империи», т. XVI, с. 287.

3 Նույն տեղում:

4 Н. Б. Голикова. Очерки по истории городов России конца XVII—начала XVIII вв., М., 1982, с. 169.

5 Н. Б. Голикова. Указ. соч.

1738 թ. մարդահամարով Աստրախանում արևելյան ժողովուրդներից հաշվառվել են՝

հայեր և կաթոլիկներ— 543
բուխարացիներ— 273

գիլանցիներ— 78
ագլթանցիներ— 49...⁶

Մինչև XVIII դարի վերջին քառորդը ռուսահայ գաղթօջախը ներկայացնում էր ընդամենը երեք հիմնական կենտրոններով՝ Աստրախան, Ղզլար և Մոկրոկ քաղաքներում:

1775 թ. կազմված տեղեկանքի համաձայն Ղզլար քաղաքի բնակչության ազգային կազմը ուներ հետևյալ պատկերը՝.

Ռուսներ		Հայեր	1222
Վրացիներ	470 անձ	Այլք	232

Սոդրոկ քաղաքի համար տվյալներ հայտնի են 1777 թ. սեպտեմբերի 1-ին կազմված ցուցակով՝ հայազգի բոլոր բնակիչների թվարկմամբ՝.

Ռուսներ—		Հույներ	21
Վրացիներ—	684 անձ	Կաթոլիկներ	43
Հայեր—	560	Չերքեզ-կաբարդացիներ	217
Օսեր—	95	Էնդամեններ	1620

1778—1779 թթ. տեղի ունեցավ Ղրիմահայոց փոխադրումը Դոնի գետաբերանի մոտ գտնվող տարածք, որտեղ հիմնադրվեց Նոր Նախիջևան անունով հայկական բնակավայր՝ հարակից հինգ հայկական գյուղերով հանդերձ⁷։ Նըշված վերարևելեցման հետևանքով ոչ միայն կտրուկ մեծացավ ռուսահայ գաղթօջախի քանակական կազմը, այլև այն ձեռք բերեց որակական նոր մակարդակ։

1780 թ. է վերաբերում հայերի քանակի մասին համառոտագրության ընդգրկումով Հովսեփ Արղուիսյանի կազմած առաջին տեղեկանքը, որի մեջ ներառված են նաև Ղրիմից տեղահանված հայերի քանակի մասին թվական տվյալները։ Այդ ցուցակի համաձայն, հայազգի անձնավորությունների քանակը ռուսական պետության սահմաններում, ըստ բնակավայրերի ուներ հետևյալ պատկերը⁸։

«Ղրիմու ելեալ ժողովուրդքն են տունք ԳՌ (3000) և անձինք՝ ԺԲ հազարք (12000)։

Հաշտարխանցիք են տունք ԲՃԿԾ (865) և անձինք՝ երեք հազար Ե(5) հարիւրք։

Ղզլարցիք են տունք ԳՃԿ (360) և անձինք՝ երկու հազար ԲՃ հարիւրք (2200)։

⁶ Նույն տեղում, էջ 170։

⁷ Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., Документы подобрал, подготовил к печати и предпослал им исследование В. Н. Гамрекели. Тбилиси, 1968, с. 51.

⁸ Документы по взаимоотношениям Грузии..., с. 52. Անվանացանկը տե՛ս նույն տեղում, էջ 202—221։ Ուշագրավ է, որ վրացիների թվարկման մեջ նկատելի են հայկական ազգանուններ, իսկ կաթոլիկների անունները անխտիր միայն հայկական են։ Ըստ այդմ, թեական պիտի համարել հրատարակչի կատարած տոկոսային հարաբերության մասին հաշվարկները, ըստ որի, իբր, քաղաքի մեծամասնությունը կազմում էին վրացիները։

⁹ Ղրիմահայոց տեղահանման և Նոր Նախիջևանի հիմնադրման մասին հանգամանորեն տե՛ս վ. Միքայելյան. Ղրիմի հայկական գաղութի պատմություն. Երևան, 1964։ Նույն ի՛ր՝ Ղրիմահայոց պատմություն. Երևան, 1989, վ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.). Երևան, 1967։

¹⁰ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթ. դիվան, թղթ. 5, մավ. 26—13, թ. 7։

Պետրպօլիք՝ տունք տասն և անձինք 2(80);
Մօսկով՝ տունք քսան և երկու և անձինք ԱՃԾ (150);
Մօզդով՝ տունք ԱՃԼ (130) և անձինք էՃ (700);
Սարաֆան՝ տունք ԽԴ (44) և անձինք երկու հարիւր հիսուն;
Բօրաղան՝ տունք Լ (30), անձինք՝ ԳՃ (300);
Որք միանգամ յերկրիս Ռուստաց են տունք ԴՌԴՃԿԱ (4461)¹¹ և անձինք ժԻԻԼԿՃԶ (19190), բաց ի լեռնաբնակ շերքեղացն մերազնեից, որք ոչ են յայտնի մեզ»¹²;

Բերված աղյուսակի թվական տվյալների հաստատումն ենք գտնում Հովսեփ Արշուիթյանի 1782 թ. հունվարի 20-ին դրած նամակներից մեկի հետևյալ արտահայտության մեջ. «Եւ քսան հազար անձանց կեանք կախի յինէն...»¹³, որ նշանակում էր, թե այդքան էր այդ պահին Ռուսահայ զաղթօջախի, այն է՝ Հ. Արշուիթյանի թեմի քանակը:

1775 թ. տվյալների համեմատությամբ Ղզլարի բնակչության քանակը 1222-ից հասել էր 2200-ի, իսկ Սոզդովի բնակչությունը 1777 թ. եղած 560-ից դարձել էր 700:

Առավել ամբողջական են 1782 թ. իրականացված ընդհանուր մարդահամարի ժամանակ (4-րդ ռեզիտ) ստացված արդյունքները:

Այդ մարդահամարի տվյալներով Աստրախանի հայազգի բնակչության քանակական կազմը ուներ հետևյալ պատկերը.

Արանց թիւն է—693

Արուաց թիւն է—1855

Կանանց թիւն է—924

գաց թիւն է—1691

Տղայոց թիւն է—1162

Արուաց և իգաց թիւն է—3546¹⁴;

Աղջկանց թիւն է—767

Ղզլարի բնակչության քանակական կազմը ուներ հետևյալ պատկերը.

Ռուսներ

415

Այլք

3465

Վրացիներ

1551

Հնդամենք

8462¹⁵;

Հայեր

3031

Սոզդովի բնակչության աճը կատարվում էր համեմատաբար դանդաղ.

Ռուսներ

6

Այլք

368

Վրացիներ

804

Հնդամենք

1887¹⁶;

Հայեր

709

Հյուսիսային Կովկասում նոր զաղթօջախի ստեղծման առաջարկությամբ հանդես էին եկել, ինչպես այդ մասին տեղեկանում ենք Դ. Ա. Պոտյոմկինին Պ. Ս. Պոտյոմկինի գրած գաղտնի զեկուցագրից, «армяне, живущие между закубанцами в Большой Кабарде и по разным горским местам», խնդրել էին բնակչության համար որևէ վայր հատկացնել: Պ. Պոտյոմկինը 1784 թ. ապրիլի 26-ին ու մայիսի 31-ին զեկուցում է, թե ինքը չի հապաղի

¹¹ Ընդհանուր գումարը պատճենի մեջ նշված է «տունք ԴՌԴՃԿԱ», որ պարզապես զրչական վրիպման արդյունք է: Տե՛ս նույն տեղում:

¹² Չերքեզահայոց թվաքանակի մասին վկայություններ պահպանվել են միայն XIX դարի 30—40-ական թթ., երբ Ռուսաստանը վճռականորեն ձեռնամուխ եղավ երկրամասի դրավմանը: XVIII դարի վերջին քառորդից հայտնի է միայն, որ 1783 թ. չերքեզահայոց հինգ ընտանիք փոխադրվել էր նոր Նախիջևան, իսկ 1784 և 1791 թ. տեղի ունեցած նմանատիպ փորձերը անհաջողությամբ են ավարտվել: Տե՛ս Գ. Ս. Аракелян. Черкесоган (Историко-этнографическое исследование).—Кавказ и Византия, вып. 4, Ереван, 1984, с. 86.

¹³ ՄՄ, ձեռ. 4496, էջ 42:

¹⁴ ՄՄ, ձեռ. 2949, ր. 1ա:

¹⁵ Документы по взаимоотношениям Грузин с Северным Кавказом..., с. 51.

¹⁶ Նույն տեղում, էջ 52:

այդ կատարել, և սպասում է միայն Գ. Պոտյոմկինի հրահանգին¹⁷։ Շուտով ստացվում է նաև Գ. Ա. Պոտյոմկինի արձագանքը, 1784 թ. սեպտեմբերի 19-ին նա հրահանգում է Պ. Պոտյոմկինին. «По рапорту в.пр. от 31-го мая, при котором препроводили вы челобитную кумыцких, кабардинских и за-кубанских армян, в губернии Кавказской пребывание свое основать желающих, представляю я в. пр. назначить место для их селения, кото-рое и может быть наречено по имени Святого Григория Арменского. От стечения туда народа и от разпространения сего селения будет зависеть учреждение тамо города, а между тем могут быть им доставлены все выгоды, верноподдашимся е. и. в. рабам принадлежащим»¹⁸.

Ռուսահայ գաղթօջախների քանակական կազմի մեջ էական փոփոխու-թյուններ տեղի ունեցան 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին հայ բնակչության մի մեծ մասի հավաքագրումով ու բնակեցումով նորաստեղծ Գրիգորիոպոլ քաղաքում։ Այդ հանգամանքի շնորհիվ ռուսական կայսրության տարածք անցան շուրջ 4000 հայեր, ինչի շնորհիվ էլ հայազգի բնակչության ընդհանուր քանակը կազմեց մոտ 30 000 անձ։ Այդ մասին ուղղակի ցուցում է Պ. Զուբովին 1793 թ. սեպտեմբերի 12-ին Հովսեփ Արղու-թյանի գրած նամակի այն տողերը, որով հիշեցնում է, թե իր խնդրանքի կա-տարման դեպքում «тем заставьте обоего пола до 30 тысяч душ благодар-ных за вас бога молить...»¹⁹։

Ռուսահայ գաղթօջախը նոր համալրում ստացավ 1796 թ. Վ. Զուբովի արշավանքի դադարեցումից հետո Դերբենտի ու Մուսկուրի հայերի ռուսական զորքերի հետ Ռուսաստան տեղափոխվելու շնորհիվ։

Առավել մանրամասն ու հետաքրքիր է Հովսեփ Արղությանի կազմած այն տեղեկագիրը, որ վերաբերում է XVIII դարի վերջին և պահպանվել է ինքնա-գիր ստորագրությամբ (հավանաբար կցվել է 1798 թ. խնդրագրին)։

«Ռուսաստանի տարբեր նահանգներում և քաղաքներում բնակվող հայ ժողովրդի քանակը.

Սանկտ Պետերբուրգ	10 ընտանիք	82 շունչ
Մոսկվա	25	180
Աստրախանի նահանգ.		
Աստրախան	947	5685
Ղզլար	732	4256
Սոգդոկ	240	817 ²⁰
Մաջար	120	680
Դերբենտից և Մուսկուրից ելած	610	5212
Սարաֆանի մետաքսի գործարան	80	342
Շովորոսիայի նահանգ.		
Նոր Նախիջևան և հինգ գյուղեր	2200	12478 ²¹

17 Армяно-русские отношения во второй половине XVIII века, (сборник докумен-тов), т. IV, под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1990, с. 302.

18 Նույն տեղում, IV, էջ. 323։ Կարգադրությունը Պ. Ա. Պոտյոմկինը ստացել է նույն թվականի հոկտեմբերի 19-ին։ Այդ կարգադրությունից կարելի է կատարել այն հետևությունը, որ Գրիգոր Լուսավորչի անունով քաղաք հիմնադրելու գաղափարը կար արդեն իսկ 1784 թ., որը իրականացավ միայն 1792-ին՝ Գրիգորիոպոլի հիմնադրումով, և վերջինս իրոք կրում էր Գրիգոր Լուսավորչի և ոչ Գ. Պոտյոմկինի անունը։

19 Армяно-русские отношения..., IV, с. 399.

20 Սոգդոկի քաղաքային մագիստրատի տեղեկանքի համաձայն բնակչության թիվը կազ-մում էր 4685, իսկ հայ բնակչության քանակը նշված է 1331 (ЦГИА РФ, ф. 1374, оп. 2, л. 1064, л. 122). 1802 թ. օգոստոսի 1-ի դրությամբ Սոգդոկի բնակչության թվաքանակը նշ-ված է 4434 շունչ, իսկ հայազգի բնակչության քանակը՝ 1361 (Документы по взаимоотно-шениям Грузии..., с. 52). 2. Արղությանի բերած թիվը ակնհայտորեն նվազեցված է։

21 Նոր Նախիջևանի բնակչության քանակը 1793 թ. առանց գյուղերի բնակչության կազ-

Ղրիմի տարբեր քաղաքներում	252	1043
Գրիգորիոպոլ	522	4444
	Պոլսի նահանգ.	
Իտալիոպո	25	116
Ընդամենը	5 763 ծուխ	35341 շունչ
	Վանքերի և եկեղեցիների քանակը.	
Մոսկվա		2 եկեղեցի
Սանկտ Պետերբուրգ		2
Աստրախանի նահանգ		12
Նովոռոսիայի	3 վանք	23
Ընդամենը	3 վանք	39 եկեղեցի ²² :

Վերոբերյալ աղյուսակում տարակուսանք է հարուցում թերևս միայն Ղրգ-լարի հայազգի բնակչության մասին եղած թվականն նշումը (4256 շունչ), որովհետև Պ. Գ. Բուտկովի մոտ եղած տվյալները Ղզլարի 1798 թ. դեմոգրաֆիկ կացության մասին ներկայացնում են մեկ այլ իրավիճակ, որի ճշմարտանման լինելը հավաստող վկայություն է պահպանվել նաև հայկական սկզբնաղբյուրներից մեկում։ Ըստ Պ. Բուտկովի²³, 1798 թ. Ղզլարի բնակչության ազգային կազմը ունեցել է հետևյալ պատկերը.

Ռուսներ	108 շունչ	Այլք	1772
Հայեր	2779	Ընդամենը	5464 շունչ:
Վրացիներ	805		

Ղզլարի բնակչության կազմի բերված թվաքանակի համեմատությունը 1782 թ. տվյալների հետ պարզում է, որ բնակչության քանակը ոչ միայն չի ավելացել, այլ տեղի է ունեցել լուրջ նվազում, հատկապես վրացիների (746), ռուսների (307) ու նաև հայերի (252) մոտ, իսկ թաթարների 3000 շնչից ավելի բնակչությունը այլևս չի արձանագրված 1798-ին։ Որ իրոք այս երևույթը գուցե վրիպակների կամ թյուրիմացության արդյունք չէ, ցույց է տալիս 1798 թ. Ղզլարից Հովսեփ Արղունյանին Հակոբ Աբրահամյանի գրած նամակի «էլ խորք, վրացի ոչ գոյ անվամբ, ապա ողջ հայ ու վայ»²⁴ արտահայտությունը։

Այսպիսով, ինչպես ակնհայտ է բերված թվերից, Ռուսաստանում հայ բնակչության թիվը արագորեն աճում էր ինչպես Ռուսաստանի կողմից նորանոր տարածքներ նվաճելու և տեղի հայ բնակչությանը ռուսահայ գաղթօջախի մեջ ընդգրկելու, այնպես էլ բնական աճի ու Այսրկովկասից կատարվող նորանոր գաղթների շնորհիվ։ Հարկ է ընդգծել, որ ռուսահայ գաղթօջախի ստվարացումը տարերային աճի արդյունք չէր, այլ հետևանք նպատակասլաց գործունեության ու քաղաքականության։ Այդ առումով բնորոշ է նոր նախնիների օրինակը, որի բնակիչները Ղրիմից դուրս գալուց հետո հայտնվել էին համեմատաբար անբարենպաստ պայմաններում։ Ղրիմ վերադառնալու ձգտումն ու փորձերը կատարվում էին պարբերաբար, սակայն և արգելակվում հայ գործիչների կողմից տարբեր միջոցներով։ Այսպես, վավերագրերից մեկում, որ գրվել է 1790 թ., նշվում է. «Նոքա ինքեանք յատեան ելանեն, թէ Ղրիմ կամ իմք, այս յառաջինն չէ, տասն և մէկ տարի է, որ նոքա միշտ զայս խորհին և առնել կամին և ի մէջ քաղաքին այլայլումն ձգեն։ Այս անգամ լավ պա-

մում էր 7564 շունչ, իսկ գյուղերինը՝ 1511, որից Չալթր—405, Թոփտի—342, Մեծ Սալա—262, Սուլթան Սալա—248, Նեսվիտա—254։ Տե՛ս Վ. Բ. Բարխուդարյան. Նոր նախնիներ..., էջ 122։

²² ЦГИА РФ. ф. 1374, оп. 1, д. 1815, л. 89. Հմմտ. ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 72, վավ. 456։ Տե՛ս նաև Վ. Բ. Բարխուդարյան. Նոր նախնիներ..., էջ 128։

²³ П. Г. Бутков. Материалы для новой истории Кавказа, ч. 1, СПб., 1869, с. 156. Հմմտ. Документы по взаимоотношениям Грузии..., с. 51.

²⁴ Армяно-русские отношения., IV, с. 477.

տիժ կրեն, որ խրատ լինի ինքեանց, միւս անգամ այսպիսի շփոթ շահարուցանել և քաղաքի կործանման պատճառ չլինել»²⁵:

Խուսափում են բնակություն հրահրելու նաև լեռնականների մոտ գերի ընկած հայերի ու վրացիների մի մասը, որը ռուսական զորքերի կողմից ազատագրվում էր գերությունից: Այսպես, 1800 թ. ապրիլին Մոզդոկի կազակները ջոկատը լեռնականներից ազատագրել էր 57 գերիների, մեծ մասամբ վրացիներ և հայեր, որոնք տարվել էին Հերակլի տիրություններից և որոնց փորձում էին տեղափոխել Անապա՝ թուրքերին վաճառելու համար²⁶: Խուսափում էին տեղափոխվում և ապա այնտեղ վերավաճառվում նաև առանձին հայազգի անհատների կողմից Հյուսիսային Կովկասում փրկագնված գերիները²⁷:

Հայ բնակչության թիվը, այսպիսով, XVIII դարի վերջին՝ 1775 թ. համեմատությամբ ավելացել էր 30 հազարով և (չհաշվառված բնակչության որոշակի տոկոսի ավելացումով)²⁸ ակնհայտորեն գերազանցել 40 հազարի սահմանագիծը, որից ավելի քան 10 հազարը՝ Հյուսիսային Կովկասում, Հովսեփ Արղունյանի վերոբերյալ ցանկի մեջ բացակայում է Գեորգիևսկի (Եագորցկի) ամրոցը, այն դեպքում, երբ վստահաբար գիտենք այնտեղ ոչ միայն հայ բնակչության, այլև հայկական եկեղեցու գոյության մասին: Երուսաղեմի Թագևոս նվիրակի կողմից 1797 թ. նոյեմբերի 23-ին Մոզդոկից Հ. Արղունյանին գրած նամակում նշվում է «(1797 թ. հոկտեմբերի) Ժե(15)ին գնացի ի Եագորցկի: Տառաչ քան զգնալն մեր սեպտեմբերի յեյն հրձիգ եղեալ ի կրպակս նոցին հուպ եկեղեցւոյն սկսեալ ԺԲ(12) դուքան այրեալ էր դէպ ի կողմն իրիյփոխին և բազում վնաս հասեալ: Ի գնալն մեր զայրեցեալսն նորոգէին, նաև զեկեղեցին ի տեղոյն փոխեալ՝ փոքր ինչ հեռի ի հիմանց նորոգ շինէին: Որոյ աղագաւ ըստ յուսոյն մերոյ ոչ եղաք արդիւնաւոր, հազիւ լի է Ժ(10) թուման նուիրակական արդիւնք է հաս անտի ի ձեռս մեր»²⁹:

Համեմատության համար հարկ է ընդգծել, որ նույն ժամանակամիջոցին Հյուսիսային Կովկասում ենթադրվում է մոտ 2500-ից մինչև 3000 «վրացիների» առկայություն³⁰, որոնց մի զգալի մասը ևս վրաստանցի հայեր էին, հաճախ՝ հայկական անձնանուններով, որոնք ցուցակներում ընդգրկված են որպես «վրացիներ» (վրաստանցիներ):

Ամփոփելով հայ բնակչության քանակական կազմի աճի նկատմամբ ռու-

25 Վ. Բ. Բարյուդարյան. Նոր նախիջևանի..., էջ 124:

26 АКАК, т. I, с. 720; т. II, с. 936—37.

27 Նման գործարքների մասին փաստաթղթեր են պահպանվել Վրաստանի ԳԱ Զեռագրերի ինստիտուտի արխիվային բաժնի վավերագրերի հավաքածուի մեջ: Մեզ հետաքրքրող ժամանակին է վերաբերում հետևյալ ամբողջական պայմանագիրը, որ կազմվել է հայերեն 1798 թ. սեպտեմբերի 23-ին. «Ջորութին գրոյս այս է, որ ես ի Մոզդոկ բնակեալ ազգաւ հայ հանդուցեալ Զուլաի Պապի որդի Յարութինս ի Չաշան զմի գերի գնեցի գնով, որ է ազգաւ հայ և բնակութեամբ թէլաւցի Մատուռի որդի Մարգարն, և աստ ի Մոզդոկ բերի գնա և վաճառի էտու և Յարութինս զայս իմ գնեալ Մարգար գերին քեզ՝ ի Մոզդոկ բնակեալ հանդուցեալ Բալիսօսրովի որդւոյ հայոց քահանայ տէր Զաքարիայիդ, ռուսի խօստեալի սեաւ փողով տաւն և երկու թումանի գնով, որոյ կեսն լինի զՁ), որ այս վերոյ յիշեալ փողն ի տէր Զաքարիայիդ անթերի եհաս ինձ՝ Յարութինս, որոյ վասն զայս վաճառման պիրս էտու քեզ՝ տէր Զաքարիայիդ: Այսուհետև ոչ ես՝ Յարութինս, որոյ վասն զայս վաճառման պիրս էտու քեզ՝ տէր Զաքարիայիդ և յոչ որդւոց քումմէ և ոչ ի քոյայնոց առնելոց ենք վերոյ յիշեալ զՄարգարն, և ոչ վասն փող ինչ պահանջելոց ենք: Գրեցաւ վաճառման դիրս ի Մոզդոկ ի 1798 թուոյն և ի սեպտեմբերի 23-ին: Զայս վերոյ գրեալ գիրն պարոն Յարութինի խնդրիով գրեցի և վկայեմ, Յակոբու որդի իրր տիրացու Յարութինս Ոսկանեան Թիֆլիզցի»: Վրաստանի ԳԱ Զեռագրերի ինստիտուտ, Арх. Д.—151.

28 Հ. Արղունյանի կազմած ցանկի մեջ բացակայում են մի շարք վայրեր, որտեղ տարբեր աղբյուրներից հայտնի է հայ բնակչության գոյության մասին (համտ. կազարյանների կալվածքները, Մոզդոկ և այլն):

29 ՄՄ, ԿԳ, թղթ. 6, վավ. 101, բնագիր:

30 Документы по взаимоотношениям Грузии..., с. 55.

սական պետության վարած քաղաքականության արդյունքները, որի հետևանքով ձևավորվեց բազմամարդ ու հայազգի հոծ զանգված, պետք է ասել, որ հայ բնակչությունը խոշոր կապիտալ էր ինչպես արևելյան պետությունների, այնպես էլ ռուսական պետության համար, որ նպատակադիր դեպի իրեն էր ձգում այլևայլ միջոցներով: Ինչպես Հազարյանները, այնպես էլ Հովսեփ Արղությանը, գերազանց գիտակցելով ռուսական պետության համար հայ բնակչության արժեքն ու նշանակությունը, հենվում էին այդ կապիտալի վրա և այդ ամրապնդում էր նրանց դիրքերը:

Եթե 1780-ական թ. սկզբներին Ռուսաստանը հայ գործիչներին ներկայանում էր որպես ապագա դաշնակից պետություն, որի հետ Հայաստանը կարող էր ունենալ պայմանագրային հարաբերություններ, ապա 1790-ական թթ. վերջին Ռուսաստանը սկսում է ընկալվել որպես երկրորդ հայրենիք և հայ տարարվում, թե հայերը «с истинным усердием притекают и готовы притекать в новое свое отечество»³¹:

Ռուսաստանը հայտարարելով հայերի համար երկրորդ հայրենիք և հայ բնակչությանը հավաքագրելով այնտեղ, հայազգի գործիչները ակնկալում էին Ռուսաստանից նաև Հայաստանի գրավում, որտեղ ինչպես հայերի, այնպես էլ Ռուսաստանի շահերը պետք է բաշխվեին համամասնությամբ՝ հայերի համար կենսականը նվաճվելիք ազատությունն էր պարսկա-թուրքական լծից, իսկ Ռուսաստանի համար՝ տնտեսական ու քաղաքական շահը: Նման համաձայնության փորձ հայ բնակչության համար հնարավոր չէր ակնկալել ո՛չ Հնդկաստանում և ո՛չ՝ Հայաստանը նվաճած թուրք-պարսկական պետություններից ու նաև որևէ այլ խոշոր երկրից: Հնդկաստանի հայ գաղթօջախում ևս նման համաձայնություն հնարավոր կողմ դիտվում էին Ռուսաստանը և Վրաստանը: Պայքարը Հայաստանի համար, այդպիսով, ոչ միայն չէր դադարել, այլև թևակոխել էր նոր փուլ և ընթանում էր ավելի նպատակասլաց ձևով, թեև արտաքուստ՝ խուլ և աննկատ³²:

Հայ ազատագրական շարժման գործիչները XVIII դարի վերջին քառորդին մտահոգացան մի համարձակ ծրագիր, այն է՝ հայ ժողովրդի հայրենագարծության ու ներգաղթի գաղափարը և փորձեցին իրականացնել այն:

Հայտնի է, որ համաշխարհային պատմության մեջ ցեղերի ու ժողովուրդների տեղաշարժերը և արտագաղթերը, ի տարբերություն ներգաղթի երևույթի³³, առավել հաճախակի կրկնվող իրադարձություններ էին: Վերջինիս գոյության մասին մենք չունենք առայժմ որոշակի վկայություն գտնելու մինչև XVIII դարի վերջը: Հայտնի է, որ արտագաղթերը, կամ ժողովուրդների մեծ գաղթերը հանգեցրել են նոր պետությունների ու ժողովուրդների առաջացման կամ կազմավորման, որպիսի բազմաթիվ փաստեր կարելի է թվարկել աշխարհի շատ տարածաշրջաններից: Օսմանյան պետությունը ևս հետևանք էր միջինասիական տափաստաններից արտագաղթած հոծ բնակչության տեղաշարժի: Հայաստանից ևս եղել են հայ բնակչության բազմաթիվ արտագաղթեր և բռնագաղթեր: Գրեթե բոլոր նվաճողները Հայաստան կատարած արշավանքների ժամանակ իրենց հետ տարել են մեծ քանակությամբ բնակչություն և,

³¹ ЦГИА РФ, ф. 1374, оп. 2, л. 1815, л. 18.

³² Հայաստանի համար պայքարի ուղուց հեռացող հայ բուրժուազիան և վաճառականությունը արագորեն կամ ձուլվում էր և կամ՝ կորցնում բնակչության մեջ իր հենարանը:

³³ Ներգաղթը հայոց հոգեբանության ու աշխարհայնական մեջ նույնացվել է հայրենագարծության (հայրենիք վերադառնալու) հետ: Թեև ժամանակակից պատմագրության մեջ փորձ է արվում դրանք տարբերակելու, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն այլ ժողովուրդների մոտ ընթացող տեղաշարժերի, հայոց մեջ ի սկզբանե այն ունեցել է հստակ և գերակշիռ արտահայտություն գտած Հայրենիք ու Հայրենագարծություն գաղափարի ու հիմնավորման ձևով: Այդ իր արտահայտությունն է գտել անգամ ռուսաց Պավել Առաջին կայսեր գրագրության մեջ: Վրաց Գեորգի XII թագավորին և Արցախի մելիքներին ուղղած իր նամակներում Պավել Առաջինը օգտագործում է հենց «отчизна» տերմինը, որը չի նշանակում միայն կալվածք ու, բնականաբար, նաև չի հանդիպում թյուրքական ցեղախմբերի մասին գրագրություններում:

հատկապես, բնակչության առևտրա-արհեստավորական խավը³⁴։ Արտագաղթերից թերևս միայն դեպի Կիլիկիա կատարված տեղաշարժերն էին, որ հիմք գրեցին նոր իշխանության առաջացման, մնացած բոլոր դեպքերում տեղափոխված բնակչությունը կամ ձուլվում էր տեղաբնիկների մեջ և կամ լավագույն դեպքում ստեղծվում էին հայկական գաղթօջախներ, որոնք լյեւ փորձում էին դիմագրավել ձուլման գործընթացին, այնուամենայնիվ մշտապես ենթակա էին նման վտանգի։ XI դարի հայտնի արտագաղթերից հետո խոշոր տեղաշարժեր կատարվեցին XIV դարում՝ Լենկ Թեմուրի կողմից իրականացված բռնագաղթերի ժամանակ, XV դարում Հայաստանում Սև և Սպիտակ խոյափյունների տիրապետության ընթացքում, XVI—XVII դդ. Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև ընթացող պատերազմների ժամանակ Թուրքիայի կողմից իրականացված հայ բնակչության բռնագաղթերը դեպի Կ. Պոլիս, 1604—1605 թթ. Շահ Աբաս Առաջինի կողմից իրականացված բռնագաղթը դեպի Իրան և այլն³⁵։ Հայերն արտագաղթում էին նաև ավելի հեռավոր երկրներ (Լեհաստան, Եգիպտոս, Իտալիա և այլն)։ Այս բոլոր տեղաշարժերին զուգահեռ, միաժամանակ մեծ թվով քոչվոր ցեղեր էին մուտք գործում նաև հայկական լեռնաշխարհ։ Նրանց մի մասը, անցնելով նստակեցության, բնակեցնում էր լքված գյուղերը կամ հիմնադրում նոր գյուղեր ու բնակավայրեր՝ որոշակի ազդեցություն թողնելով Հայաստանում էթնիկական հարաբերակցության վրա։

XVII—XVIII դդ. Արարատյան աշխարհը կրկին վերակենդանացավ իր հայազգի բնակչությամբ և 1724 թ. թուրքական արշավանքի ժամանակ Երևանում ու շրջակա գյուղերում լրջորեն դիմադրեց թուրքական բանակին։ Երևանի խանության կազմավորումից հետո հայ բնակչությունը հերթական խոշոր կորուստն ունեցավ 1770-ական թթ. վերջին, երբ Հերակ Երկրորդը այստեղից դեպի Վրաստանի տարածք բռնագաղթեցրեց հայկական ութ գյուղերի բնակչությունը³⁶։

1770 թ. օգոստոսի 14-ին էնզելիում ռուսական հյուպատոս Բոգոլյուբովը Արտաքին գործերի պետական Կոլեգիա ներկայացրած զեկույցագրում հաղորդելով այն ամենը, ինչ իրեն հաջողվել էր իմանալ Հերակ II-ի և Վրաստանի մասին, գրում է. «Во первых, что как это владение обличается с областью Эриванскою и Армению и город Эриван, как и вся сняя провинция наполнена не сравненно природными старожилами, нежели персанами, хотя она от начала персидского владения и по ныне управляется подвластным персидскому воеводе ханом, с доставлением оному податей»³⁷։

Մագրասում 1772 թ. Սովսես Բաղրամյանի աշխատությամբ լույս ընծայված «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» գրքում հայ իրականության մեջ առաջին անգամ արձանագրված է հայրենադարձության գաղափարը։ Աստծուն դիմելու, աղոթքի ձևով է այնտեղ նշվում այդ մասին.

Տեր, այժմ քեզ ենք աղերսում ու պաղատում,
Քո երեսը մեզնից ընդմիջտ մի դարձնիր և մի անիր
մեզ ցիրուցան, թափառական։
Բաժան-բաժան եղած, ցրված հոտը քո սուրբ Լուսավորչի
ժողովելով՝ իր փարախի մեջ հավաքիր,

34 Վ. Միքայելյան. Հայկական արտագաղթերը (6—19-րդ դդ.)։—էջեր հայ պատմության համալսարանի պատմության, խմբագրությամբ Վ. Բ. Բարիտուդարյանի և Զ. Եկավյանի. Երևան, 1996, էջ 21—41։

35 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության. մաս Բ, Քրիստոսի ԺԱ դարեն մինչև միջին դարու վախճանը. Գահիրե, 1955։

36 Վ. Բ. Գրիգորյան. Երևանի խանությունը XVIII դարի վերջին. Երևան, 1958, էջ 31։

37 АВПР, ф. СРП, оп. 77/7, д. 111, л. 42—45. Երևանի խանից Հերակու ստանում էր տարեկան 30 հազար ռուբլի հարկ (տե՛ս նույն տեղում, թ. 40)։

Այսինքն՝ պանդուխտ ազգը հայոց, հայրենիքն իր
ետ բերելով, համախմբիր...³⁸

Հայրենիքի մորմորով ու ցավով է գրված Հովսեփ Արղունյանի նամակը Պավել Պետրովի թագածառանգին 1780 թ.:

«Как после мрачных туч просия в благотворное солнце возвеселяет, и после хладных зимы распространяясь весенний воздух лиет всюду прохладу, тако и для смертнаго нет во свете злополучия, горесть коего не услаждалась бы надеждою текущего за оным счастья.

Подобно сему народ армянский во времена своих бедствии, когда зима безвластителя царствует во странах и областях наших, когда сгустившися тучи озлоблени и прискорбни, коими нас тяготят неверные, грозят всеконечным разорением и пленом, в сии самые плачевные времена обретаем во всеавгустейшей родительнице в. и. в. оное благотворное солнце, которое сияет во убожество несчастных земли нашей туком блага. ...Будучи преемником и престола и добродетели Екатерины премудрой, милосердствуя ко славной в древности, ныне же упавшей стране Араратской, излей на нее щедрости твои, яко дождь обилие приносящий... простирая непобедимое оружие Российское и концы селенныя, отверзешь врата совершеннаго искупления Армении; И да неумолчно скорбящая земля сия услышит от уст твоих, *Востани, востани Армения! Да сокрушенная мысца твоя обячтца в крепость! мужайся! Екатерина* изволяет мною собрать и оживить раздробленные члены твои! И *возвести тебя на верх древния твоея славы!*³⁹... Да совершит сию крепкую на преславный дом Петров надежду нашу ...желал бы хотя мало изразить чувства твоего в душе моей, соединенный с чувствами всего армянского народа: *возношу молитвенный глас мой соединенный со гласами всея страны Араратския...*»⁴⁰

Հայոց պետականության վերականգնման գործը XVIII դարի վերջին բա-
նորդին դիտվում է հայ ժողովրդի իրավունքն ու պարտականությունը և, ըստ
այդմ, հակադրվում Հայաստանը նվաճած պետությունների վարած քաղաքա-
կանությանը և, բնականաբար, պայմանավորվում է Հայաստանում հայ ժո-
ղովրդի գերակշիռ գոյության անհրաժեշտությամբ: Միակ երկիրը, որի շահերը
կարող էին համընկնել հայ ազատագրական շարժման գործիչների ծրագրերին
է առավել մոտ էր գտնվում Հայաստանին, համարվում էր Վրաստանը, թեև
Վրաստանը ևս հաճախ չէր խորշում Հայաստանում վարելու այնպիսի քաղա-
քականություն, որը բխում էր միակողմանիորեն միայն իր շահերից⁴¹: Ուստի
դարձանայի չէ, որ Վրաստանում էին բեկնվում կամ խաչաձևվում ինչպես
Հայաստան—Ռուսաստան ուղղությամբ իրականացվող բանակցություններն ու
քաղաքականությունը, այնպես էլ հնդկահայ գաղթության կողմից Հայաստա-
նի ազատագրման համար ձեռնարկվող միջոցառումները:

Հայ առաջին հրապարակախոսական տպագիր գրքի հանդես գալուց հետո
(1772, Մառոսս, «Նոր տետրակ որ կոչի Յոդոդրակ») սկիզբ առավ հայոց ներ-
գաղթի գաղափարը: Այն առավել հստակությամբ ձևակերպվեց «նշանակում»,
որտեղ հույս է հայտնվում, թե Հայաստանը ազատագրվելուց հետո հայերը
«պետք է ելլեն ի պանդխտութենէ առ գիրկս գորովագութ մօրն իւրեանց յԱյ-
րարտու աշխարհ»: Իսկ մինչ այդ Հնդկաստանից հեռացողներին խորհուրդ է

³⁸ Նոր տետրակ որ կոչվում է Հորդորակ, թարգմանությունը գրաբար բնագրից և ծանո-
րագրությունները Պ. Մ. Խաչատրյանի. Երևան, 1991, էջ 33:

³⁹ Հնդգծումը՝ բնագրում:

⁴⁰ ՄՄ. Լազարյանների արխիվ. թղթ. 109, գործ 22, վավ. 17:

⁴¹ Այսպես, 1779 թ. արշավելով Արարատյան դաշտ, Հերակլ Երկրորդը իր «երթին Վրաս-
տան տեղափոխեց հայկական ութ ղյուղերի բնակչությունը, որը ևս զգալի բացասական նշա-
նակություն ունեցավ Արարատյան դաշտի էթնիկ դիմագծի պահպանման առումով:

տրվում ժամանակավորապես ապաստանել Ղզլար քաղաքում և առաջարկվում է գաղթական հնդկահայերի ու ռուսաց կառավարության միջև կնքվելիք պայմանագրի տեքստ, որով սահմանվում էր հայերի ժամանակավոր կարգավիճակը Ռուսաստանում: Այսպիսով, Ռուսաստանն ու Վրաստանը այն հիմնական կենտրոններն էին, որտեղ հայերը կարող էին ապաստանել մինչև Հայաստանի ազատագրումը, ուստի և հայ բնակչության քանակի ստվարացումը նշված երկրներում խրախուսվում էր հայ ազատագրական գործիչների շրջանում:

Հավանաբար Հովսեփի էմինի ու Մովսես Բաղրամյանի հետ որոշակի քրնսարկումների արդյունք էր այն, որ առաջինը ներգաղթի ծրագիրը մշակվեց Հնդկաստանում, որը և փորձեց իրականացնել Շահամիր Շահամիրյանը: Այդ փորձը պայանավորված էր այն առարկություններով, որ Հայաստանի ազատագրության Շ. Շահամիրյանի ծրագիրը արժանացել էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսի, ապա և Ղուկաս կաթողիկոսի կողմից: Սիմեոն կաթողիկոսը նախատեսելով Շ. Շահամիրյանին անհեռատես քայլերի ձեռնարկման համար, գտնում էր, որ Հայաստանում օտարները կազմում են բնակչության զգալի մասը⁴³, հայ բնակչությունը բարձր տոկոս չի կազմում իր հայրենիքում, որը ևս վերջնականապես կարող է բնաջնջվել, եթե նա դիմի ապստամբության միջոցին՝ փորձելով թոթափել օտարի լուծը⁴⁴: Ահա այն հիմնական առարկություններ, որը իրավունք էր տալիս Սիմեոն Երևանցուն արկածախնդրություն անվանելու «Հորդորակի» հրատարակությունը: Նույն դիրքորոշումն էր նաև Ղուկաս կաթողիկոսի մոտ: Վերջինս, ավելի հասկանալի լինելու համար, բերում էր թուղունների ու ձկների հետ համեմատության օրինակը, թե ցանցի մեջ հայտնված թուղունն անգամ փորձում է աղատվել կապանքներից, մի՞թե Շահամիրյանը կարծում է թե Արարատյան երկրի հայերը թուղունի կամ ձկան չափ չեն մտածում իրենց ազատության մասին՝ ակնարկելով առ ահ, որ դեռևս (կամ՝ այլևս) անհնար է թշնամիների բազմության պատճառով ձեռնամուխ լինելու Հայաստանի ազատագրության գործին: Շահամիրյանը չէր կարող շրջանցել այդ առարկությունները, և առավել ևս անարժեք դիտել այդ հանդամանքները: Այդ է պատճառը, որ Հայաստանի ազատագրության խնդրի իրականացումը որոշվում է սկսել հենց այդ հարցի լուծումից: Հայ ժողովրդի հավաքագրման հաջորդ կենտրոնը, ըստ հնդկահայ գործիչների, Ռուսաստանից բացի և նրան զուգահեռ կարող էր դառնալ նաև Վրաստանը, ուստի Շահամիր Շահամիրյանը, խրախուսելով հանդերձ ռուսահայ գաղթօջախի ստվարացումը՝ փորձ է կատարում համաձայնեցնել վրաց Հերակլ Երկրորդ թագավորի հետ և նրա թուլյությունները ու կոշտ, նրա անունից դիմել տարասփյուռ հայ ժողովրդին՝ հավաքվելու Վրաստանին ենթակա հայկական տարածքներում: Առ այդ Հերակլին ուղղած 1787 թ. Շահամիրյանի նամակից պարզվում է, որ տեսնելով Հերակլի «բարեպէս ձգտումն»՝ ստվարացնելու Վրաստանի բնակչությունը, խորհուրդ է տալիս աշխարհասփյուռ հայությանն ուղղել մի «նամակ շնորհաց և պահպանութեան»: Շ. Շահամիրյանն առաջարկում է խմբագրումից հետո այն հաստատել և վերադարձնել իրեն՝ տպագրելու «հարիւրաւոր և հազարաւոր և ցրուեցից հ լերեսս երկրի, զի սովաւ փառավորեսցեն ամենայն պանդխտացեալք»: Հերակլ Երկրորդն իրոք, որոշ խմբագրումից հետո, ստորագրել ու հաստատել է այն (1790 թ. դեկտեմբերի 4) և ուղարկել Մադրաս: Ուղերձը տպագրվել է 1792 թ. Հարություն Շամվոնյանի տպարանում, 1000 օրինակ տպաքանակով: Պահպանվել է այդ ուղերձի հայերեն տպագիր օրինակից վրացերեն

⁴³ Նման մտահոգությամբ էր Սիմեոն Երևանցին առարկում Հովսեփի էմինի դործունեությանը ևս 1764 թ. Հերակլին գրած նամակում:

⁴⁴ Երևանի բնակչության մասին տե՛ս Մ. Մ. Կարապետյան. Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724—1800 թվականներին.— ՊԲՀ, 1987, № 3, էջ 95—103:

թարգմանության 1819 թ. արտագրությունը⁴⁴։ Ստորև բերվում է հայերենով պահպանված հայրենադարձության կոչող առաջին շրջաբերականի նախնական բնագիրը, որի հեղինակը Շահամիր Շահամիրյանն է և կրում է «Օրինակ կամակի պահպանության» վերնագիրը։

«Յեսուայ, Դավթեայ, Սաղոմոնէ, Բակրատայ սերնգէ օծեայ Թամրազէ ծնեայ Երկրորդ Հերակլ, շնորհօքն աստուծոյ թագաւոր Կախէթու, Քարթլու, Բօրչալու, Ղազախու և իշխող չերևանու, Գանջու և ալլն, և ալլն, և ալլն։

Շնորհ և պահպանութիւն մեր ի վերայ ազգին հայոց առհասարակ, որ ի տարրաշխարհ բնակեալ, զի շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ բարձրութեան մերոյ, որ ի նշանաւ սրբոյ խաչի պահպանէ զժողովուրդս մե՛։ րազցրութեամբ առհասարակ։ Եւ որպէս ոչ մոռացեալ մեզ ձերոց սեպական խաշնութիւն հօտին մերոյ, այսպէս ի քաղցրութենէ օրինաց մերոց շնորհեցաւ ձեզ պահպանութիւն մեր՝ եթէ ազատութիւն անձանց և եթէ տէր և ժառանգութիւն ի վերայ ստացուածոց ձերոց, զի հաւաքելով ձեր ի սեպական աշխարհ ձեր։

Եւ ի հօտն հովանաւորութեան բարձրութեան մերոյ անխտրանօք ըստաւայոց էք շնորհ և պահպանութիւն և յատկապէս ողորմութիւն ի բարձրութենէ մերմէ, միմիայն յատուցանելով յարքունիս մեր հարկ, մաքս, հաս և բաժին, ըստ օրինօք մերոյ և ընդունիլ պատիւ և պատիժ ըստ արժանաւորութեան իւրաքանչիւր) գործոց ձեռաց իւրոց համահաւասարապէս, որպէս բնիկ ժողովուրդք արքայութեան մերոյ և սեպական ազգին վրաց։

Նաևս, որպէս բարեպէս գիտեմ, զի ի միջոց երկայն ժամանակաւ յատկապէս ի ժամանակի թագաւորութեան Նադր շահի մինչև ցայսօր բնակիչն ընդ հովանաւորութեան Պարսից զրկեցան, կողոպտեցան, զրպարտեցան, որ ընդդէմ կամաց իւրանց գրաւեցին ըստացուածքս իւրեանց և անպարտ գոլով՝ պարտաւորեցան զանազան կերպիւ՝ գրովք ի յանուն զանազան արանց, որում հարկեցան ելանել առ տարր աշխարհ։ Վասն որոյ ողորմութիւնէ մերմէ շնորհեցաւ աշխարհի զրպարտեցելոց ազատութիւն առհասարակ, որ յառաջօք։ զթիւն փրկչին մերոյ Քրիստոսի 1770 թուէն ումէք ձեռի որ լինիցի, որոք կերպովմ գրեանք, որում անուամբ որ իցէ գրեցեալ ի յերեսս երկրի Իրանու. Պարսու, Արաղու և Հաղրբէջանու, յորոք քաղաք և գեօղօրեում թե պարտուղ, թէ խոստմանց և թէ դաշնադրութեանց և ալլն բոլորովին անարժան արարաք, զի երբէք մի մտցէ ի յապարանս դատաստանի մերոյ և մի ունիցի արժանաւորութիւն ոչինչ հալցուածոց, յոչ ոք յառնէ։

Առ ի հաստատութիւն բանիս ձեռնադրեցաք մերովք մատամբ և արքայական կնքով կնքեցաք այսօր ի պալատն մեր, որ ի մալրաքաղաքն Թիֆլիզ, ի ժամանակի թագաւորութեան մերոյ.. ամաց և ի յամսեանն մարտի... և ի յամի տեառն փրկչին մերոյ 1787 և ի թուին վրաց...»⁴⁵։

Քանի որ հայերեն տպագիր օրինակներից ոչ մեկը դեռևս հայտնաբերված չէ, ուստի պատկերացում ունենալու համար հայերեն տպագիր տեքստի բովանդակության մասին, և այն տարբերությունների, որ գոյություն ունեն նախագծի և հաստատված օրինակի միջև, ժամանակակից հայերենի ենք վերածում վրացերեն թարգմանությամբ պահպանված օրինակը, որ գտնվում է Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվում (ֆ. 1449, վավ. 1300)։

«Օրինակ պետական հրովարտակի⁴⁶. Շնորհիվ պահպանի օգոստոսափառ տեր Հերակլ Երկրորդ, ողորմութեամբն աստուծո, թագավոր Վրաց, Կախից և ալլն, և ալլն, և ալլն, համայն ազգին հայոց։

44 Պ. Ա. Չոբանյան. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին. Երևան, 1981, էջ 158; Նույնի՝ Հնդկահայ զաղթողների պատմությունը (Նորահայտ վավերագրեր).—ՊՐՀ, 1988, № 1, էջ 191։

45 Վրացական ուղեգրություններ..., էջ 176—177։

46 Հնարավորություն չունենալով երաշխավորել հայերենից վրացերեն թարգմանության ճշգրտության աստիճանը, բնականաբար, չենք կարող հետևել նաև հայերեն վերաթարգմանության ու հայերեն բնագրի բառացի համապատասխանությանը։

Ողորմության մեծություն, մենք՝ Յեսուի, Դավթի, Սողոմոնի, Բագրատի, հանգուցյալ Թեմուրազ թագավորի որդի Հերակլ Երկրորդ՝ թագավոր Վրաց, Կախից, և այլոց, և այլոց, և այլոց:

Անխախտելի մեր այս խոստումները հղում ենք ողջ հայոց ազգիդ, որ ապաստանել եք հեռավոր երկրներում՝ (ի գիտություն), թե չեմ մոռացել ձեր հայրենին, այլ մշտապես պարուրված ենք... ձեր պահպանության հոգսով՝ չտառանջատելով ձեզ մեր կյանքից: Երբ հավաքվեք ձեր հայրենի երկրում՝ մեր հովանավորության ներքո, կստանաք ազատ կյանք, բոլոր ձեր եկամուտների նկատմամբ մեր կողմից սիրո, պատվի և ողորմածության՝ յուրաքանչյուրին ըստ իր պատվի, որպես բնիկ ժողովուրդը մեր թագավորության, իսկ վրաց ազգը և մենք միայն բավարարված կլինենք ձեզնից՝ մեր ծառայության մեջ հարկի և մաքսի վճարումով, ըստ թագավորության օրենքի, իսկ այլ կերպ խոստանում ենք հետևյալը. քանզի գիտեմ, որ ժամանակների փոփոխությունների պատճառով, և հատկապես Նադիր շահի ժամանակներում, ձեր ազգակիցները, որ բնակվում էին Պարսկաստանում, հալածվեցին և կողոպտվեցին և իրենց կամքին հակառակ, ապօրինաբար խլվեցին նրանց ստացվածքները և շատերին ակամա պարտավորեցրին, և ուժի գործադրմամբ մուրհակներ ու ձեռացագրեր (ստացականներ) վերցրին, և այսպիսի տառապանքներով ծանրաբեռնվածությունը ստիպեց նրանց գնալ հեռավոր երկրներ, սակայն ըստ այդ գործի բոլորին շնորհների կարժանացնենք մեր կողմից, այդպիսի մարդկանց պարտքերից ազատելով, ինչպես և մինչև մեր արարիչ Քրիստոսի հազար յոթ հարյուր յոթանասուն թվականը, որտեղ էլ այդպիսի գրություններ (իմա՝ ստացականներ)՝ և ում անունով էլ և որ երկրում էլ՝ կամ Պարսկաստանում, կամ Ադրբեջանում և կամ թե քաղաքում, կամ թե դուռում ի հայտ բերվեն, բոլորը անարժեք և հատուցման ոչ ենթակա կդարձնենք, որպեսզի ոչ երբեք ընդունվի այն մեր դատարանում, և ոչ երբեք պարտատերերի կողմից պահանջ ներկայացվի այդպիսի մարդկանց, որի համար էլ որպես հաստատում՝ մեր այս խոստումնագիրը ստորագրեցինք մեր ձեռքով, կնքեցինք մեր թագավորական կնիքով մեր պալատում՝ մարաքաղաք Տփղիսում, մեր թագավորելու ժամանակ՝ տիրոջ 1790 թվականի դեկտեմբերի 4-ի օրը: (Թագավորական կնիք):

Նորին թագավորական մեծության հրամանով վրացերեն կնքված ի համաձայն թարգմանեցի և գրեցի նորին թագավորական մեծության հայերենի դպիր-թարգմանիչ Տեր Դավիթ Տեր Օհանյան: (Կնիքի տեղը):

Տպագրվեց Հնդկաստանի Մադրաս մայրաքաղաքում, Տեր Հարություն Շավոնյան Շիրազեցու տպարանում 1792 թ.:

Դիմիտրի քահանա Օբրոշչիկովն է արտագրված մանիֆեստը, 1819 թվականի մարտի 2-ին⁴⁷:

Այսպիսով, ինչպես պարզվեց վերոբերյալից, Շ. Շահամիրյանը ալդառաջարկը կատարել էր դեռևս 1787 թ. հոկտեմբերի 15-ին, որը կարող էր Հերակլին հասնել միայն 1788 թ. կեսերից ոչ շուտ: Ուստի կարևոր է արձանագրել, թե ավելի քան երկու տարի է պահանջվել այդ հրովարտակի վրացական տարբերակի պատրաստման համար և որը նշանակում է, թե առհասարակ կատարված փաստ չէր, այլ խորապես գիտակցված ու կշռադատված, երկարատև քննարկումների արդյունք հանդիսացող փաստաթուղթ: Այն

⁴⁷ Մեր թարգմանությունը կատարված է արևելային օրինակի հիման վրա: Այս շրջաբերականի վրացերեն անփույթ ու սխալ վերծանումներով հրատարակությունը տես Վ. Տուխաշվիլի. Քարթլ-Կախեթի թագավորության հարաբերությունները Կովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների հետ XVIII դարի երկրորդ կեսին. — «Վրաստանի ֆեոդալական շրջանի պատմության հարցեր», II, Թբ., 1979, էջ 98—99 (վրացերեն):

⁴⁸ Մի շարք զուգահեռություններ ստիպում են ենթադրել, որ «Ուղեբժի» բնագիրը Հարություն Շավոնյանի տպարանում տպագրելու գործում իր մասնակցություն է բերել նաև Փիլիպպոս Ղաթմաղյանցի որդի Տեր Սամուել Ղաթմաղյանցը: Վերջինս Մադրասում հայ մանուկների համար դպրոց էր հիմնել և միաժամանակ օժանդակում էր հայերեն գրքերի տպա-

հիմնականում համընկնում է Շ. Շահամիրյանի նախագծում եղած հարցադրումներին, փոփոխությունները խմբագրական են, սակայն առկա են նաև որոշ էական տարբերություններ: էական են այն շեշտադրումները, որոնք վերաբերում են Վրաց թագավորության մեջ ներգաղթող հայերի արտոնությունների ու իրավունքների խնդիրներին: Ի տարբերություն Շահամիրյանի կողմից ներկայացված նախագծի, հաստատված օրինակում թվարկվում են: չորսի փոխարեն երկու հարկատեսակ, որը պարտավոր են վճարել ներգաղթողները:

Ուշագրավ է, որ Հերակլ Երկրորդի մահվանից (1798 թ. հունվար) հետո Վրաստանի հաջորդ գահակալ դարձած Գեորգի XII-ը 1799 թ. հոկտեմբերի 25-ին Հովհաննես Շահամիրյանին գրած նամակով հայտնում է Շ. Շահամիրյանի առաջարկած քաղաքականությունը շարունակելու իր պատրաստակամությունը, որպեսզի տարագիր հայությունը, այդ թվում և Շահամիրյանի ժառանգները, վերադառնալով «ընդ եղբարս իւրեանց՝ բնակեցին ի սեպուհ աշխարհս իւրեանց՝ ի վայելել զսէր և զգթութիւն»:

Դեռևս 1798 թ. փետրվարին Գեորգիին էր դիմել Հ. Արղությանը և հիշեցնելով Գեորգիի 1790 թ. համաձայնությունը Լոռու գավառը Շահամիր Շահամիրյանին ժառանգաբար տնօրինելու մասին հրովարտակ շնորհելը, առաջարկում է «հաստատ պահեստիք զայն ուխտ, որով ոչ թէ ի հովանալուութիւն ձեր հրավիրէք միայն զհնդկաբնակ հայս, այլ և Կարսն և Ախլցխայն դատարկեալ բնակչօք նոցա՝ լնանելոց են Փանքակն և Բօրչալուն»:

Հ. Արղությանը հասկանում էր, որ իշխանությունների բարյացկամ վերաբերմունքից է մեծապես կախված գործի հաջողությունը: Նամակի շարունակության մեջ նա գրում է. «Որովհետև ի Ձեզ պարծեն միշտ հայք և ուրախ են, թէ՛ ունիմք մեր զթագաւոր ի սերնդոց թագաւորացն մերոց, պարտ է Ձեզ ևս բանիւ և գրով զհայրական իմն խնամ ցուցանել նոցա, զի տեսանելով զայդ որպէս եղեալքն ընդ հովանեալ ձերով հայք՝ ջերմեռանդութեամբ ծառայեսցեն ձեզ, նոյնպես և արտաքինքն դիմեսցեն ի հովանավորութիւն Ձեր»:

Հայրենադարձությունը և հայահավաքումը, որ անկախ պետականության մեր վերականգնման հիմնական գրավականներից մեկն էր դիտվում, որոշակի մտահոգության առարկա է մնում Ռուսաստանի հետ հարաբերությունների ոլորտում ևս: Գաղտնիք չէր, որ Ռուսաստանը ևս, ինչպես տեսանք, մտահոգ էր իր հպատակների բազմացմամբ և մշտապես օժանդակում էր այլ ժողովուրդների, այդ թվում նաև հայ բնակչության, ներհոսքին դեպի Ռուսաստանի անմարդաբնակ կամ կիսաբնակեցված տարածքներ: Փորձելով համատեղել Ռուսաստանի այդ ձգտումները և Հայաստանի ազատագրությանը նրա օժանդակելու շահագրգռությունը, Արցախի մելիքները օգնության խնդրանքով դիմելով ռուսական իշխանություններին, միաժամանակ հրաժարվում են տեղափոխվել Ռուսաստանի բուն տարածք, պատճառաբանելով, որ այն բավական հեռու է, ինչը ձեռնտու չէ հայ մելիքներին, քանզի, ինչպես այդ արձանագրված է վավերագրում. «Վրաստան տեղափոխվելու դեպքում Քուրդիստանում և Բայազետում ապրող հայերի համար ավելի դյուրին կլինի ժամանակ առ ժամանակ տեղափոխվել իրենց մոտ և ավելացնել ու զորացնել իրենց քանակն ու ուժը, քան այն դեպքում, եթե իրենք տեղափոխվեն Ռուսաստան, որի հեռավորության պատճառով քուրդիստանցի ու բայազետցի հայերը կզրկվեն (այդ հնարավորությունից), որը և այս վերջիններիս համար, որոնց քանակը կազմում է մոտ 60 հազար բնական, դավալի կլինի, քանզի նրանք ևս տառապելով հագարացիների լծի տակ, կցանկանալին միանալ մելիքներին՝ կառավարման ու դատաստանի նպատակա-

դրություն: Տե՛ր Սամուելի կրտսեր եղբայր Տե՛ր Դավիթ Ղալթմազյանցը ևս գնացել էր Հնդկաստան և Կալկաթայում հայ մանուկների համար դպրոց էր հիմնել: Տե՛ր Սամուելի մահից հետո (1794 թ. ապրիլ) Տե՛ր Դավիթը վերադարձավ Վրաստան, իսկ այնուհետև անցավ Ռուսաստան:

արմարությամբ, որովհետև նույն ազգի ու կրոնի ներկայացուցիչներ են»⁴⁹։ Կարևոր է ընդգծել, որ իրենց գրագրություններում ներգաղթի նկատի ունենալու դեպքում, Վրաստան ասելով, Հայոց մելիքները բնավ նպատակ չունենին տիրանալու վրաց հողերին, այլ ընտրելու Վրաստանի իշխանության սերբ գտնվող և Հայաստանի հնագույն հայաբնակ վայրերից մեկը հանդիսացող Ղազախ գավառը, և որն այդ ժամանակ գտնվում էր ավերված ու մարդաթափ եղած վիճակում⁵⁰։ Այս բանակցությունների ավարտին արդեն 1801 թ. Ռուսաստանին հաջողվեց իր լիակատար վերահսկողությունը ստանալ Արևելյան Վրաստանում, իսկ XIX դարի առաջին քառորդին Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ մղած երկուական պատերազմների արդյունքում Ռուսաստանը տեր դարձավ ամբողջ Այսրկովկասին։ Ահա այս ժամանակահատվածում ինչպես հայ-ռուսական, այնպես էլ վրաց-ռուսական հարաբերությունները ձեռք բերեցին նոր երանգներ, հանդես եկան հնարավորությունների ու հուսադրությունների նոր ուղղություններ, որոնք զգալի դեր խաղացին և կարևոր նշանակություն ունեցան նշված ժողովուրդների հետադաճակատագրի առումով։

ЧИСЛЕННОСТЬ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ РОССИИ
(Последняя четверть XVIII века)

П. А. ЧОБАНЯН

Резюме

В последней четверти XVIII в. численность армянского населения в России резко увеличилась (с 3000 до 40000 человек). Число армянских церквей, построенных в то время в России, достигло 39. Этот процесс был обусловлен как экономическими и политическими соображениями русского государства, так и чаяниями армянских общественных деятелей, заинтересованных в умножении компактно проживающих в России армян, в надежде на укрепление армяно-русских связей. Стараясь приумножить армянское население на юге России, учитывалось одновременно и то, что Россия, однако, была оторвана от армянских земель пространством, что затрудняло непосредственные связи между ними. Учитывая это обстоятельство, был предложен проект репатриации армян, сосредоточив их в армянских районах, входящих в то время в пределы грузинского государства. Для этого было составлено циркулярное письмо от имени Ираклия II к армянам, проживающим в странах Востока, с призывом поселиться в армянских районах грузинского царства, «на родной земле своих предков». Этот циркуляр с подписью царя Ираклия II на армянском языке был напечатан в типографии в индийском городе Мадрасе в 1792 г. и был распространен среди армян Востока. Именно в силу такого поворота событий, армянские мелики Карабаха отказались от предложения России переселиться в Россию, предпочтя остаться на армянских землях грузинского государства, в ожидании прибытия русских войск. После присоединения Карабаха к России армянские мелики вернулись в Карабах и начали бороться за свои владения, захваченные мусульманскими правителями.

⁴⁹ «Армяно-русские отношения», т. IV, л. 489.

⁵⁰ Նույն տեղում, լ. 474.